թէ Պարիշինք ընդ միմեանս հաշտելով. և բազում խօսս եղեալ ի միջի նոցա, զի առաւօտուս Եշի (29 Ցունուար) գայցեն նոքա ընդ մեզ հաշտիլ և ոչ եկին, այլ կրկին գնացեալ անկան ի գրուանս, մինչև զամենեսեան չինեալ եղեն, և մեզ զայս պատճառեցին թէ Բարեկենդանս ելանէ և ապա տեսցուք բանս և հաշտիմք ընդ միմեանս։ Բանզի պատրիգն նոցա յօրէ առաջ եկեալ և ընդ վէզիրին զամենայն ինչ տեսեալ և ապա ել երևան թէ Մտանեմք ընդ ձեզ ի դատաստան. վասն այնորիկ ի մէջ տիւանին առաջի օրն որ մտին, նա՛ համարձակ խօսէին մեծաւ բարբառով մինչեւ զարմացուցանել զամենայն իշխանսն և զբռնակալս և զտեարս և զմեծամեծսն ամենայն Տաճկաց՝ թղթեր հանեալ պարկով և գիրք բերեալ առ իւրեանս և ցոյց տան ի մէջ ատենին թէ ժամանակաւ Հայք ընդ Պարսիկս միաբանեալ են և զՏաճիկս յաղթեալ ջարդելով, և այժմս ահա՛ կամին և զայս առնել. և ասեն թէ Սոցա ձեռաց թղթերն որ ասեն թէ ի թագաւորէն է, ամենայն սուտ է և թէլպիս։ Վասն այսքան բանիցս արհամարհեալ Հայք այլ ոչ կարացին խօսել, քանզի ի ժամուն ոչ գտաւ օգնական և ոչ մի, և ի դուրս ելին։ Բայց Աստուած լիցի թիկունք աղօթիւք և բարեխօսութեամբ սուրբ նախն[եաց] մեր և հարանց սրբոց, զի զհպարտութիւնս նոցին ի գլուխս նոցին բարդեսց[է]։

Փետրուար ամիս օր Կիրակի։ Վէզիրն յամենայն գիշերի ի գոլ հեծեալ շուրջ գայր և թագաւորն ընդ նմա։

Գշի (3 Փետր.). գիշերիս յանուանեալ շուկայսն զմարդիք սպանեալ էին։

Եւ օրս Շէրպէթճոյ և Ազարիա երիցու տղաքն մեռան. ի գերեզմաներն գնացաք։